Ավետիք Իսահակյան

Մի մկան պատմություն

Իր թաքստից՝ մթին ու խոր,
Մկան մեկը ելավ մի օր,
Գանգատ գնաց բնության մոտ.
Քո դեմ, ասաց, գանգատ ունիմ,
Ով բնություն.
Այս ի՞նչ բախտ ես վիճակել ինձ.
Առջևս՝ մահ,
Սրտիս մեջ՝ ահ,
Հանգիստ չունիմ
Դաժան ու չար
Կատուներից:
Կամ հոգիս առ
Եվ կամ դարձրու
Ինձ էլ կատու:

Դաժան ու չար կատու դառած՝
Մուկը վազեց մտավ մառան,
Շուրջը սփռեց այնքան երկյուղ, Որ մկները թավագլուխ,
Ծակ ու ծերպեր շունչներն առան:

Բայց շներից հալածական
Փախավ, եկավ բնության մոտ:
Կամ հոգիս առ,

Կամ ինձ դարձրու Շուն ահարկու:

Եվ ահարկու գամփռ դառած՝
Մուկը վազեց, մտավ փարախ,
Գայլերի հետ կռվեց անվախ.
Բայց երբ լսեց զարհուրելի
Մռնչյունը վես առյուծի,
Լեղապատառ
Իրեն ձգեց բնության մոտ.
- Կամ հոգիս առ,
Կամ ինձ դարձրու
Ահեղ առյուծ,
Որ վախ չունի
Ուրիշ և ոչ մի կենդանուց:
Առյուծ դառած՝ խրոխտ ու սեգ,
Մուկը գնաց, մտավ անտառ,
Անցավ դաշտեր և առապար,
Մահ տարածեց ամենուրեք:
Սակայն մի օր մարդը հանկարծ
Առյուծի դեմ հպարտ ցրցվեց.
Առյուծն ահեղ՝ կռվի պատրաստ՝ Բաշը ցնցեց:
Սակայն մարդը կայծակնաթափ
Հուր արձակեց ամպ ու որոտ:
Եվ առյուծը մահախուճապ,
Շունչը առավ բնության մոտ.
Միայն, միայն մարդ դարձրու ինձ.
Նա է հզոր մեր բոլորից,
Նա է տերը մեր բոլորիս:

Եվ մարդ դառած մուկը զինվեց
Հրով-սրով սպառնալից.
Ամեն մի շունչ ու կենդանի
Փախչում էին նրա շուքից:

Բայց ավելի մեծ սարսափով
Վախում էր նա հիմա սաստիկ
Իր նմանից:
Տեսավ՝ մարդիկ
Իրար ահից
Չեն երկնչում, կարծես, մահից,
Օդն են ելնում ամպերից վեր
Եվ սուզվում են ծովերի տակ:
Թնդանոթով և ռումբերով
Եվ թույներով հազար տեսակ
Ջինվում են ու զինավառվում:
Եվ օրից օր զենքերով նոր
Ջինվում են ու նորից զինվում:
Եվ բյուրավոր
Բանակներով
Հարձակվում են իրար վրա,
Եվ խելագար,
Անհագաբար,
Կոտորում են,
Կոտորում են
Մարդիկ իրար…
Եվ ահաբեկ խորհում էր նա.
-Լավ չի՞ արդյոք,
Որ վերստին
Մուկիկ դառնա…